



N \_\_\_\_\_ 12-08-252 \_\_\_\_\_  
«09.» \_\_\_\_\_ 08. \_\_\_\_\_ 2012թ.

## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ ԷԴԳԱՐ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ

Հարգելի մարզպետ.

Կրթահամալիրում պետական պատվերով իրականացվում են հեղինակային կրթական ծրագրեր: ՀՀ ԿԳ նախարարության հետ կնքված թ. [Ա-6/18-12](#) պետական աջակցության պայմանագրով «Փորձարարական մանկավարժության ծրագրերի իրականացում հանրակրթությունում» ծրագրի 2012թ. աշխատանքներում նախատեսված են մեդիատեխնոլոգիական հանրակրթության գործընկեր դպրոցների ցանցի ստեղծում, ղեկավարների և դասավանդողների վերապատրաստում, կրթահամալիրի փորձի փոխանցում և ներդրում (տեղայնացում):

Կրթական փոխանակումների ծրագրով մարզի գյուղական դպրոցներ մեր այցերի, մարզի կրթության ոլորտի ղեկավարների հետ հանդիպումների, մեր փորձի ներկայացման արդյունքում ծնվեց մարզպետարանի հետ կրթական համագործակցության՝ «Ստեղծողի դպրոց. անհատի կրթական պատվեր. մեդիակրթություն» գյուղական փոքրաքանակ դպրոցի մոդելի ստեղծման առաջարկը: Ծրագրի առաջին փուլի համար ընտրվել են Մարտիրոս, Գնդեվազ, Հերմոն, Եղեգիս, Խաչիկ գյուղերի դպրոցները (ցանկը վերջնական չէ):

### Համագործակցային ներդրումային ծրագրի հայտ

Գյուղական դպրոցի հզորացման և արդիականացման ներդրումային ծրագիր՝ թվային միջոցների ամբողջական կիրառում սովորողի և ուսուցչի կողմից դպրոցում և տանը: Ծրագիրը գյուղական դպրոցի համար առաջնահերթ է. դա կապահովի սովորողի ուսուցման անհատականացումը, օժտվածության զարգացումը, ինքնակրթության միջոցով գյուղացիական տնտեսությունն ու անձնային կյանքը վարելու համար անհրաժեշտ կարողությունների ձեռքբերումը, գյուղի պահանջներին բավարարող շրջանավարտի պատրաստումը, որակյալ մասնագիտական կրթության նախապատրաստումը՝ առանց սովորողին գյուղից կտրելու: Ծրագրի մասնագետների խումբը կմշակի մեդիակրթության տեխնիկական կազմակերպման ենթակառուցվածքը: Յուրաքանչյուր սովորող և ուսուցիչ կունենան անհատական համակարգիչ, դպրոցական շենքը ապահովված կլինի անլար ինտերնետով, ուսուցման թվային այլ միջոցներով (պրոյեկտոր, էլեկտրոնային գրատախտակ, ֆոտոխցիկ, ձայնագրիչ): Կրթահամալիրի մասնագետները կիրականացնեն ընտրված դպրոցների մանկավարժական աշխատողների վերապատրաստումներ, կաջակցեն դպրոցներին՝ մշակելու գյուղական մոդել-դպրոցի զարգացման ծրագիր, տեղայնացնելու տեխնոլոգիական հանրակրթություն կազմակերպելու մեր և այլոց առաջավոր փորձը:

Ծրագիրը կնպաստի գյուղի զարգացմանը:

- Հեռավար ուսուցման ծրագրերի միջոցով սովորողների օժտվածության զարգացման, անհատական ուսուցման կազմակերպումը սովորողին, ուսուցչին կապահովի գյուղում, կբարելավի ու գրավիչ կդարձնի գյուղում սովորողի կյանքը:

- Գյուղական դպրոցը կդառնա բաց, կիրականացվեն հանրապետական և միջազգային կրթական փոխանակման ծրագրեր: Սովորողների և ուսուցիչների ուսումնական աշխատանքի միջոցով գյուղը, գյուղական միջավայրը՝ իր հուշարձաններով, բնությամբ, սովորույթներով, կենցաղով, լեզվով, պատմությամբ, ավանդույթներով, մարդկանցով, խնդիրներով, կհայտնվեն մեղիայում՝ նպաստելով ունեցածի արժևորմանն ու կարևորմանը գյուղացու (այդ թվում՝ սովորողի և ուսուցչի) համար:
- Գյուղը հայտնի ու գրավիչ կդառնա հայաստնցիների և արտասահմանյան հյուրերի համար, կբերի հայրենագիտության և ներքին տուրիզմի զարգացման:
- Ներքին տուրիզմի զարգացումը և կրթական փոխանակումների ծրագրերի իրականացումը կառաջացնեն լրացուցիչ ծառայությունների (քաղաքացիների ամառային ու ձմեռային հագիստ, էկոտուրիզմ, էքստրիմ-տուրիզմ, մշակութային տուրիզմ) պահանջ, որոնք դպրոցը, անհատ ձեռներեց գյուղացին կարող են մատուցել:

Առաջարկում ենք օգոստոս ամսվա ընթացքում կազմակերպել ծրագրային հայտի նախնական ներկայացում-քննարկում Ձեր ընտրած կազմով, մարզում կամ կրթահամալիրում՝ տեղում ծանոթանալով մեր փորձին, որին կարող եք ծանոթանալ մեր պաշտոնական կայքում՝ [mskh.am](http://mskh.am):

#### ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



**ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԵՆ՝**

**Ա. ԲԼԵՅԱՆ**